**Արձանագրություն N 2**
**«ԻԿՎԾԻԿ-ԳՀԾՁԲ -20/01» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

Ք.Երևան | 28.12.2020թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին.
Հանձնաժողովի նախագահ՝ Դ.Հովսեփյան
Հանձնաժողովի անդամներ՝
Մ.Հայրումյան
Լ.Հարությունյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Դ.Միերյան

**1. «ԻԿՎԾԻԿ-ԳՀԾՁԲ-21/01» ծածկագրով Գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման և գնահատման մասին**

Ընդունել ի գիտություն, որ

1.1 **«ԻԿՎԾԻԿ-ԳՀԾՁԲ-21/01»** ծածկագրով ընթացակարգի հայտերի բացումը տեղի է ունեցել սույն ընթացակարգի հայտարարությունը և հրավերը համակարգում հրապարակվելու օրվանից հաշված 7-րդ օրվա ժամը 10:00-ին, Ք.Երևան, Մ.Խորենացու 162ա հասցեում:

**«ԻԿՎԾԻԿ-ԳՀԾՁԲ-21/01»** ծածկագրով ընթացակարգին հայտ էին ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| hh | Մասնակցի անվանումը | Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն |
|---|---|---|
| 1 | «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ | Info@artlunch.am |
| 2 | «Տիգրան Բաղդասարյան» Ա/Ձ | «baghdasaryan@inbox.ru» |
| 3 | «Կարեն Սուքոյան» Ա/Ձ | «office@eurofurshet.am» |

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:**

1.2 Մասնակիցներ «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի, «Տիգրան Բաղդասարյան» ՍՊԸ-ի և «Կարեն Սուքոյան» Ա/Ձ-ի Հայտ պարունակող ծրարները կազմվել և ներկայացվել են հրավերով սահմանված կարգի համաձայն:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:**

1.3 Մասնակիցներ «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի, «Տիգրան Բաղդասարյան» ՍՊԸ-ի և «Կարեն Սուքոյան» Ա/Ձ-ի հայտերում հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը (Հավելված N 1՝ ԴԻՄՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ և Հավելված N 2՝ Գնային առաջարկ) առկա են և կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:**

1.4 Մասնակիցներ «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի, «Տիգրան Բաղդասարյան» ՍՊԸ-ի և «Կարեն Սուքոյան» Ա/Ձ-ի ներկայացրած գնային առաջարկները հետևյալն են՝

| | Մասնակիցների անվանումները | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ | | | «Տիգրան Բաղդասարյան» Ա/Ձ | | | «Կարեն Սուքոյան» Ա/Ձ | | |
| | Ծառայության անվանումը | Նախահաշվային գին | Մասնակցի ներկայացրած գինը Առանց ԱԱՀ /Ինքնարժեք և շահույթ/ | ԱԱՀ | Ընդհանուր գին | Մասնակցի ներկայացրած գինը Առանց ԱԱՀ /Ինքնարժեք և շահույթ/ | ԱԱՀ | Ընդհանուր գին | Մասնակցի ներկայացրած գինը Առանց ԱԱՀ /Ինքնարժեք և շահույթ/ | ԱԱՀ | Ընդհանուր գին |
| 1 | Հատուկ ուսուցում անցնող ՀՀ ԱՆ հատուկ ծառայողների համար Ֆուրշետների և ճաշկերույթների կազմակերպում (ու նմանատիպ այլ ծառայությունների) մատուցում | **27 720 000** | 43 830 000 | - | 43 830 000 | 27 720 000 | - | 27 720 000 | 29 700 000 | - | 29 700 000 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2 | գիշերակացով մնացող վերապատրաստում անցնող ՀՀ ԱՆ հատուկ ծառայողների համար ֆուրշետների և ճաշկերույթների կազմակերպում (ու նմանատիպ այլ ծառայությունների) մատուցում | **2 772 000** | 4 383 000 | - | 4 383 000 | 2 772 000 | - | 2 772 000 | 2 970 000 | - | 2 970 000 |
| 3 | Առանց գիշերակացի վերապատրաստում անցնող ՀՀ ԱՆ հատուկ ծառայողների համար ֆուրշետների և ճաշկերույթների կազմակերպում (ու նմանատիպ այլ ծառայությունների) մատուցում | **6 258 000** | 7 770 000 | - | 7 770 000 | 6 258 000 | - | 6 258 000 | 7 560 000 | - | 7 560 000 |

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:**

**1.5** Մասնակիցներ «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի, «Տիգրան Բաղդասարյան» ՍՊԸ-ի և «Կարեն Սուքոյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը հայտով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը ճիշտ են:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:**

**1.6** Հանձնաժողովը արձանագրեց, որ նիստին ներկա էին «Տիգրան Բաղդասարյան» Ա/Ձ-ի տնօրենի կողմից լիազորված անձ Ա.Բաղդասարյանը և «Կարեն Սուքոյան» Ա/Ձ-ի տնօրեն Կ.Սուքոյանը, ուստի հանձնաժողովը որոշեց, համաձայն ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի և սույն ծածկագրով մրցույթի մաս 1-ի 8.6 կետի՝ կազմակերպել 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ :

Քանի որ նիստին ներկա էին բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները) , հանձնաժողովը որոշեց անցկացնել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ:

Բանակցությունների արդյունքում մասնակիցներ «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ն, «Տիգրան Բաղդասարյան» ՍՊԸ-ն և «Կարեն Սուքոյան» Ա/Ձ-ն հրաժարվեցին նվազեցնել իրենց կողմից ներկայացրած գնային առաջարկները 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով:

Բանակցությունների արդյունքում մասնակիցներ «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի, «Տիգրան Բաղդասարյան» ՍՊԸ-ի և «Կարեն Սուքոյան» Ա/Ձ-ի գնային առաջարկները մնացին անփոփոխ:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:**

## *2. «ԻԿՎԾԻԿ-ԳՀԾՁԲ-21/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի նիստի արդյունքների ամփոփման մասին*

2.1 Հանձնաժողովը որոշեց.

2.1 Հանձնաժողովը որոշեց.

Ընտրված մասնակից ճանաչել «Տիգրան Բաղդասարյան» Ա/Ձ–ին, որպես հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից

| Հ/Հ | Մասնակիցների զբաղեցրած տեղերը | Մասնակիցների անվանումները |
|---|---|---|
| 1 | 1 | «Տիգրան Բաղդասարյան» Ա/Ձ |

**Ընդուվել է որոշում՝ կողմ-3, դեմ -0 :**

**3. «ԻԿՎԾԻԿ-ԳՀԾՁԲ-21/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին**

**3.1** «ԻԿՎԾԻԿ-ԳՀԾՁԲ-21/01» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցման ընթացակարգով պայմանագիր կնքելու որոշման հայտարարության տեքստը:

3.2«ԻԿՎԾԻԿ-ԳՀԾՁԲ-21/01» ծածկագրով գնման ընթացակարգի համար «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում, պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

3.3 Պայմանագիր կնքելու նպատակով ընթացակարգի ընտրված մասնակցին ծանուցել Պայմանագրի նախագիծը և առաջարկել օրենքով սահմանված ժամկետում ներկայացնել որակավորման ապահովումը (մասնակցի գնային առաջարկի չափով) և պայմանագրի ապահովում ( կնքվելիք պայմանագրի 10 տոկոսի չափով) միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով, որը ներկայացնելուց հետո սահմանված կարգով կկնքվի պայմանագիր:

**Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ -0 :**

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի | | |
| Նախագահ՝ | Դ.Հովսեփյան | |
| Անդամներ՝ | Մ.Հայրումյան | |
| | Լ.Հարությունյան | |
| Քարտուղար՝ | Դ.Միերյան | |